# ՅԱԻԵԼՈՒԱԾ

## (ԹՈՒՂԹ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐ ԳՈՇՆ ԿՈՉԻՒՐ. *)

Զայս գծագրութիւն սակաւուք հարկաւոր կարծեաք եդեալ յաղագս վրաց, որ ոչ սակաւ թշնամութիւն[1] ընդ մեզ վարին քան զայլս, աշակերտելով նոցա: Եւ արդ, զի նախ առ ձեզ են[2] նախագրութիւն բանիս, ով Աստուածասէր և բարեպաշտ իշխանք իշխանաց, Զաքարէ և Իւանէ, ծնունդք սիրոյ Աստուծոյ ի բարեզարդ ծնողաց. զի ես յամենայնի նուաստս Մխիթար, ի բանս և ի գործս՝ սպասաւորաց բանին, որ յաւուրս մեր՝ տեսանելով և լսելով զբամբասանս վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէի հոգի, մանաւանդ զի հաւանեալ թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ, յայսմիկ եկի միտս՝ գրել սակաւուք զճշմարիտ հաւատոյս մերոյ զաւրինակ, և զոր ամբաստանիմք, որ[3] ոչ միաբանին ընդ յոյնս և ընդ վիրս՝ ցուցանել փութացաք զանհնարութիւն. Նաև զայն յայտ արարաք, թէ զոր արժան է[4] ի կարծելոց հերձուածողաց՝ զի կարի յանդգնութիւն է մկրտել զհայ, կամ զյոյն և զվրացի. վասն այն և զաղութն գրեցաք ի թղթի աստ, զոր արարեալ է հարցն առաջնոց, փոխանակ մկրտելոյ ընթեռնուլ ի վերայ դարձելոցն ի ժողովոյն Քաղկեդոնի, և որ[5] զնոյն չափ ունի յայլոց ազգաց, զոր անգիտացեալ յոյնք և վիրք պատրեալսն[6] ի նոցանէ զհայ ոք մկրտեն, և հայ ոք զնոսա. զի յոյժ հայհոյութիւն է առ Աստուած, և ոչ լուսաւորութիւն. Միանգամայն և զայն ծանուցաք, թէ զինչ այժմ հնարաւոր է լինել ազգաց, զորս թէ ձեզ հաճոյ կարծի թարգմանել՝ ընթեռնուլ նոցա, և թէ անշահ համարիք, դուք զկարծիսն, զոր ունիք ի մեզ գայթակղելի իրս՝ իբր փոշի[7] ի տեսանելեաց ձեր[8] ի բաց թաւթափեցէք. Յաղագս այնորիկ[9] յառաջնորդս նոցա զսակաւ գրեցաք թղթո[1] աւրինակ, և ապա եկաք ի բանս աւանդութեանց մեր և կարգաց. Եւ դուք բաւական էք զատակացեալ պատերազմի հայհոյութեան շիջուցանել իմաստութեամբ, և հաւանել բանիւ, թէպէտ և անհնար ցուցաք զժողովն լինել և զմիաբանութիւն.

* այսպէս 2 օր. ի մէջ.

1. թշնամութեամբ.
2. է.
3. թէ.
4. մկրտել.
5. որ եւ.
6. զպատրեալսն.
7. զփոշի.
8. ձերոց.
9. այնորիկ.

### ՓՈՔՐ ԻՆՉ ԵՒ ԹՂԹՈՅ ԱՒՐԻՆԱԿՍ 2, ...

Աստուածարեալ և հոգևոր Տեառնդ, Քրիստոսապսակ կաթողիկոսիդ հաւատացելոցդ ի Քրիստոս վրաց և Աստուածապատիւ եպիսկոպոսաց և հարց հոգևորաց, եղբայրանոցաց և կուսաստանաց, և խաչակրաւն միանձանց, և հասարակ եկեղեցական կարգաց,—Նուաստս ի Քրիստոս և սպասաւոր բանի նորա[3], գծողս ոյսմ[4] մատենի՝ աղաչանաւք ծանուցանեմ: Քանզի ընդ միտ ածի զոր սատանայ սերմանեաց ի միջի հաւատացելոց զնախանձ և զատելութիւն, և վասն այն համարձակեցաք և զսակաւ գրեցաք զթուղթդ[5], ոչ հակառակելով և կամ զոք պարսաւելով յազգաց, այլ զարժան և զիրաւունս[6] իբր դատաստանաւ ցուցաք, և զդըժուարաւ գալն ի միաբանութիւն, և զհնարաւորն ըստ ժամանակիս[7] յայտ արարաք, և զճշմարիտ խոստովանութիւն ցուցաք զմերոցս ազգաց[8], և զխոտելի իրն ոչ թաքուցաք[9] զմեր ազգիս, և զիւրաքանչիւր ազգի զգովելին և զպարսաւելին գրեցաք, և ի գլուխ բանին ընտրեցաք զբարին և զլաւըն: Զի այն էր հաճոյ Աստուծոյ, զի ամենայն ազգ միակրաւն լինէր. բայց տեսաք որ սատանայ և ամբարտաւանութիւն մեր[10] զայդ չտայ առնել՝ լաւ համարեցաք որ զմիմեանս չթշնամանեմք, և զխաչ և զեկեղեցի միմեանց չանարգեմք, զի այն Քրիստոսի է անարգանք: Եւ զոր գրելին[11] ի թղթի[12] վասն հաւատոց խոստովանութեան՝[13] ճշմարտութեամբ այսպէս է, և դատիմ ի Տեառնէ, թէ վասն հայոց երեսաց ես սուտ ինչ գրել եմ. Բայց կամ և խղճամ ընդ ձեր, զի անգիտութեամբ, որ չէ ոք զձեզ հասկացուցեալ՝ կայք և զՔրիստոս զայրացուցանէք, և զձեր ժողովուրդդ ի գայթագղեցանել էք[14] ի հայք, թէ տաճիկն և ջահուդն[15] լաւ է քան զհայն:

1. Ա. թղթոյ. Բ. թուխտոյ.
2. օրինակդ.
3. Բանին Աստուծոյ.
4. գծողացս.
5. Բ. զթուխտդ.
6. զարժանն եւ զիրաւն.
7. ժամանակին.
8. զմերոց ազգացս.
9. իրսն չթագուցաք.
10. ամբարտաւանութիւնն.
11. գրեալ եմ.
12. Ա. ի թղթիդ Բ. ի թխթիդ.
13. խոստովանութեանն.
14. Ա. գայթակղեցնել էք.
15. ջհուտն.

Եւ զայդ ի Հռոմէն էք[1] լսել, և Հռոմն ի սուտ-քրիստոնէէն՝ ի յարևորդոյն, զինչ գրել ենք ի թըղթիս զպատճառն[2]. Մի, սիրելիք Աստուծոյ, լսող[3] լինիք թշնամեաց[4] մերոց, զի չկայ ի Հայք Հերձուած, և զայն սակաւ պատճառն զոր ունին՝ յամենայն ազգ այլ շատ կան և տեսանենք. և այն չէ Հերձուած Հայոց, որ մկրտելոյ Հրաման կայ ի գրոց, որպէս գրել ենք ի թղթիդ. թէ զոր պիտի մկրտել և[5] զոր ոչ. վասն այն և զաղաւթսն գրեցաք ի թըղթիս, զոր արարել են առաջին Հարքն, որ չմկըրտէին, այլ աղաւթիւք սրբէին՝ զայնչափ Հերձուածոլն որ յայս ժամանակիս երևի. Զի որ զմկրտութիւնդ առնեն՝ թէ վրացի զՀայ մկրտեն և թէ Հայ զվրացի, զո՞ր Քրիստոս տայ թողուլ և կամ զո՞ր խոստովանել, զի մի է Քրիստոս և ոչ երկու. զի մի Հաւատ և մի մկրտութիւն քարոզի ի գրոց։ * Արդ մի՛ լիցի ձեզ պատճառ լինել և այլոց գայթագղութիւն[6], այլ առաւել շինութիւն[7] և խաղաղութեան, որպէս զի Համարձակ լիցուք ասել. Ահա ես և մանկունք իմ,—և ընդունիցիք զանթառամ պսակն ի Քրիստոսէ, որ է աւրՀնեալ յաւիտեան[8]. Թէ Հաճոյ ձեզ առնէ Աստուած զսակաւ պատճառդ[9] ի բանս թղթիդ, դուք աննախանձ կամաւք աստուածասէր թագաւորացդ յայտնեցէք, զի և դոքա նախանձաւորին խաղաղութեան և սիրոյ առ ի միմեանս Հաւատացելոց։ Գիտեմք և զձեզ վշտակից կամաւք Հոգալ. թէև ոչ է միաբանելոյ Հնար, այլ Հնար է զՀայՀոյութիւնն բառնալ և խափանել զմկրտութիւնդ, որ յոյժ անՀաճոյ Քրիստոսի և ամենայն սրբոց նորա. Ապա թէ ոչ՝ թողութիւն առնէք մեզ, զի ոչ յանդգնութեամբ, այլ վշտանալով գրեցաք. Եւ արդ սկսցուք ի բանս առաջիկայ թղթիս[10]։

Բազմաց փոյթ եղև ըստ պատաՀման ժամանակաց և ըստ Հարկի գրել ինչ յաղագս բամբասանաց զմէնջ՝ վասն Հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ. Նմանապէս և այժմ մեզ պատաՀեաց՝ ոչ իբր իմաստուն կատարեալ ձեռնամուխ եղաք, այլ սակաւ ըստ կարի նման լինել որ զանկեալ զՀասկ առնու և զմնացեալն զճիռ յայգւոջ։ Այլ զայս նախ գիցուք զկամս Աստուծոյ, որ սիրողն է միաբանական կենաց մարդկան. վասն որոյ կարաւտս արար պէտս ունել միմեանց, և յաղագս այնորիկ շինեցան քաղաքք և այլ բնակութիւնք. Ընդդէմ այսմ է[1] և կամք չարին՝ բաժանելն մարդկան ատելութեամբ, զի այսու զիւրաւ՝ զչարն գործիցէ, որպէս[2] սիրով զբարին Աստուած, զի Հին և Նոր կտակարանք[3] զսէրն տան աստուածպաշտութեան և աշակերտութեան Քրիստոսի նշանակ. և թէ Աստուած զմի լեզուն ի բազում[4] բաժանեաց՝ զչարն խափանելոյ աղագաւ, և ի Հարկէ յայտ անտի է, զի ի վերայ բարոյ սիրոյ սերման զատելութիւնն սերմանեաց չարն, զոր ասաց Տէրն. Այր թշնամի արար զայն.* և յայնմանէ բուսան Հերձուածք, և նա յամբարտաւանութենէ. Յաղագս այնորիկ Քրիստոս՝ սկիզբըն[5] բարեաց Հաւատացելոց, զխոնարՀութիւնն եւ երանութեամբ, և աւետարանաւն արար մի Հաւտ և մի Հովիւ, զցրուեալ զորդիսն Աստուծոյ ժողովէ[6] ի մի եկեղեցի. զոր տեսեալ բարեատեացն սատանայ զմայր ուղղութեանց[7] նախանձու շարժեաց զոմանս ի մարդկանէ զամբարտաւանս, սերմանել զանազան աղանդս. որպէս յաւուրս ճըշմարիտ մարգարէիցն[8] զսուտ յարոյց մարգարէսն, և զսուտ առաքեալսն յաւուրս ճշմարիտ առաքելոցն՝ նմանապէս յաւուրս ուղղափառ Հայրապետաց[9] զչարափառ Հայրապետսն. և որ չարն է քան զամենայն՝ զի չեա իմանալ զվնասն, բարոյ պատճառաւ զչարն եա խաւսել Հակառակ միմեանց. Եւ որպէս արար Ադամ աստուածանալ[10] պատճառաւ, և զոր ունէրն զպատիւն զայն կորոյս՝ այսպէս և այժմ լինել տեսանեմք առ ամենայն ազգս Քրիստոնէից. զի ախտիւք ամբարտաւանութեամբ փքացեալք, անՀաւանք միմեանց լինելով՝ զՔրիստոս Աստուած ՀայՀոյեն և զԱստուած Հայր զայրացուցանեն, և զոր ոչ գիտեն՝ ձեւանալն գիտեն[11], և զսակաւն զոր լուեալ եան[12] յիմաստնոցն՝ զայն կատարեալ գիտութիւն կարծեն. Զի թէ Պաւղոս, որ զՔրիստոս յինքն[13] ունէր և յերրորդ յերկինս յափշտակեցաւ և զանճառելին լուեալ՝[14] ասէր. Փոքր ի շատէ գիտեմք, և առ կարծողն գիտելոյ ասացեալ է՝ չև ևս գիտաց որպէս արժան էր,— զի՞նչ գիտեն և որ ի ցնորս աշխարՀիս զբաղեալ[15]

1. ենք.
2. Բ. ի թղթիդ պատճառաւ.
3. լսող.
4. թշնամեացն.
5. եւ կամ.
6. գայթակղութիւն.
7. շինութեան.
8. Ս. յաւիտեան.
9. պատճառ.
10. Ա. թղթոյս. Բ. թխոյս.
* Եփես. Դ. 5.

1. Ս. Կ.
2. այսպէս.
3. կտակարանս.
4. ի բազումս.
5. սկիզբն.
6. ժողովելով.
7. զմայրն ամենայն ուղղութեանցն.
8. մարգարէից.
9. վարդապետացն եւ Հայրապետացն.
10. առ Ադամ աստուածանալոյ.
11. ձեւանան գիտել.
12. են.
13. յինքեան
14. լուար.
15. զբաղեալ.
* Մատթ. ԺԳ. 27.

են և պաշտօնեայք եկեղեցւոյ, միայն պարապեալք ուտելոյ ըմպելոյ [1] և ըմբռնեալք ի զանազան ախտս. Եւ կարի [2] զարմանալին է՝ խաբեալք ի չարէն, չշատանան յուրեանց վնասուն, այլ փութան զայնոսիկ, որ ուղիղն գնան ճանապարհ, և զնոսա մոլորեցուցանեն [3], թողեալ զերից ս. ժողովին զհաւատս [4] ուղիղս: Առաջինն որ եղև ըստ հրամանի բարեպաշտ թագաւորին Կոստանդիանոսի վասն Արիոսի, որ արարած ասէր զՈրդին Աստուծոյ. և ժողովեալ ի Նիկիայ Մակարիոս [5] Երուսաղեմի, Եւստաթէս Հայաստանէ [6], Յուլիոս Հռոմայ [7], և այլք ՅԺԸ. որոց յայտնի են անուանք, այլ զի մի լիցուք երկայնաբանք, և վասն ձեր մանաւանդ, զի անպարապ էք ընթերցմանց. Երկրորդ ժողովն առ մեծի [8] Թէոդոսիւ եղև ի Բիզանդիա [9] վասն Հոգեմարտին Մակեդոնի, որ նուազ [10] ասէ զՀոգին սուրբ, քան զՀայր և զՈրդի, և եր [11] մեռեալ նախ [12] քան զգումարել ժողովոյն, և գլխաւորք ժողովին էին. Կիւրղոս Երուսաղեմի, Տիմոթէոս Աղէկսանդրի [13], Մելիտիոս Անտիոքա [14], Գրիգոր Նիւսացի, Դամասոս ի Հռոմայ, Գրիգոր Աստուածաբան, Ներսէս ի Հայաստանէ, և այլք ՃԾ. հարք հոգևորք՝ խոստովանեցին զՀոգին սուրբ Հաւր և Որդւոյ հաւասար և փառակից, և նզովեցին ի մեռեալս ընդ ամենայն հերձուածողսն [15] զՄակեդոն. Եւ երրորդ ժողով եղև յաւուրս Թէոդոս Փոքու, վասն աղանդին [16] Նեստորի Անտիոքացւոյ, որ [17] ի Բիզանդիայ եպիսկոպոս և սկսաւ զխոտորել վարդապետութիւն [18] ուսուցանել զՊաւղոսի Սամոստացւոյ, զոր էառ [19] Դիոդորոս Տարսոնացի, և ի նմանէ Թէոդորոս Մամուեստացի, և ի նմանէ Նեստորիոս. զի ոչ խոստովանէին զԲանն մարմին եղեալ, այլ ի մարմին բնակեալ. և շնորհաւք որդի ասէր զ'ի Մարիամայ ծնեալն. Զոր գիտացեալ Կիւրղի Աղէքսանդրի եպիսկոպոսապետի գրէ երիցս անգամ ի բաց [1] դառնալ ի հայհոյութեանցն և միաբանել կաթողիկէ [2] եկեղեցւոյ. Իսկ Նեստոր զընդդէմն առնէր [3] պատասխանի. վասն որոյ հարկաւորի Կիւրեղ գրել առ թագաւորն հրաման տալ ժողովոյ. Եւ հրամայէ ժողովել [4] յԵփեսոս, և ժողովեցան Մ. եպիսկոպոս [5] յիւրաքանչիւր գաւառէ. Յորնաղ Երուսաղեմի, Կիւրեղ Աղեկսանդրի [6], Մոմնոս Եփեսացոց [7], և Սահակ Հայաստանի միաբանի գրով ընդ նոսա, Կեղեստիանոս ի Հռոմա [8],—զոր նզովեալ զՆեստոր հալածական արարին ի կողմանս Մծբնա և անդի վարեցաւ ի խուժաստան. Զկնի այսորիկ կալաւ զաթոռ Բուզանդիա [9] Մաքսիմիանոս, և ապա Պրոկղոս, յետ որոյ Փլաբիանոս. և սկսաւ ուսուցանել զՆեստորի մոլորութիւնն. Իսկ Եւտիքէ [10] ոմն, որ էր վանական ի կղզոջն, առաջրէր ընդդէմ Փլիբանոսի [11] և ոչ [12] խոստովանէր ճշմարտութեամբ առնուլ մարմին ի Մարիամա, այլ նմանաւորութեամբ [13] մարմնոյ, զի կերպարանաւ գտաւ իբրև զմարդ. Եւ զայս գիտացեալ թագաւորին՝ հրամայէ դարձել [14] յԵփեսոս, և ժողովեցան եպիսկոպոսունք ՄԼ. Յորնաղ Երուսաղեմի, Դիոսկորոս Աղեկսանդրի, [15] և նզովեցին զԵւտիքէս. և նա զղջացեալ ստութեամբ՝ խոստովանի առնուլ մարմին ճըշմարտութեամբ, և յետոյ ի նոյն դառնայ աղանդ. Իսկ հաւանեալքն Փլաբիանոսի հաստատել կամելով զԲ. բնութիւն [16]՝ ոչ հաւանի Դիոսկորոս, այլ նզովէ զՓլաբիանոս, որ յետ Գ. աւուր սատակեալ լինի [17] ի բարկութենէ Աստուծոյ. Եւ սահմանեն այսպէս. Որ ոք ոչ խոստովանի զՔրիստոս մի բընութիւն մարմնոյն և Բանին վասն անճառ միութեան [18]՝ նզովեալ լիցի: Զի զերկաքանչիւրսն նզովեցին աղանդ, և ըստ ցուցելոյ պատճառիդ լինի ժողով չորրորդ: Իսկ զկնի Թէոդոսի թագաւորէ Մարկիանոս, և յերկրորդ ամի թագաւորութեան

1. ուտելոյ եւ ըմպելոյ միայն պարապեալ.
2. որ կարի.
3. մոլորեցուցանել.
4. ժողովոյն հաւատս.
5. Մակար.
6. ի Հայաստանէ.
7. Ա. ի Հռօմայ Բ. ի Հռոմայ.
8. մեծին.
9. Ա. ի Բուզանդիա. Բ. ի Բիւզանդիա.
10. Նուազ.
11. եր.
12. Նա նախ.
13. Տիմոթէոս Աղեքսանդրի.
14. Մելիտոս Անտիոքու.
15. հեձուածողս.
16. աղանդոյն.
17. որ եր.
18. զխոտոր վարդապետութիւնն.
19. առ.

1. առ նա դառնայ.
2. Ա. ի կարուղիկէ եկեղեցւոյ. Բ. ի կարուղիկէ եկեղեցի.
3. առնէ.
4. ժողով լինել.
5. մի. եպիսկոպոսք.
6. Աղեքսանդրի.
7. Մոմնաս Եփեսոսի.
8. Կեղեստիանոս ի Հռոմայ.
9. զաթոռն Բիւզանդիոյ.
10. Եւտիքէս.
11. Փլաբիանոսի.
12. Ա. որ. Բ. ոչ (օ. եւ).
13. նմանութիւն.
14. հրամայէր դարձեալ ժողով լինել յԵփեսոս.
15. Աղեքսանդրի.
16. բնութիւնն
17. Ա. սատակի. Բ. սատակել.
18. միութեանն.

իւրոյ հրամայէ ժողով լինել ի Քաղկեդոն, ի մայրաքաղաքին Բիւթանացւոց, քննախնդիր լեալ լուծմանն Նեստորի և Նորին համախոհ[1] եպիսկոպոսացն, զի էր ինքն նորին աղանդոյն, և շարժեալ լինէր ի Պողքերայ զուգակցէ իւրմէ, որ էր քոյր թագաւորին Թէոդոսի և սիրելի Փլանրանոսի. առնել յորդորէր ժողով գումարել աղանդակցացն Նեստորի և դարձուցանել զՆեստոր, զի տակաւին կենդանի էր ի Խուժաստանի: Եւ ի գալն Նեստորի հասանէ բարկութիւն Աստուծոյ[2], և եղեալ որդնալից սատակեցաւ. Իսկ գումարեալքն ի Քաղկեդոն ողջ.[3] եպիսկոպոսք. զի կրկին առնէ զթիւ եպիսկոպոսացն, քան զոր արարն Կոստանդիանոս, փառասիրութեան ախտիւ. Եւ էին գլխաւորք՝ Յոբնաղ Երուսաղեմի, Դիոսկորոս Աղէքսանդրի. Լեոն Հռովմայ[4], զի թէպէտ ինքն ոչ եկն ի ժողովն՝ եա տանել զմղ. երորդ[5] գլխոցն զառաջագոյն[6] առ Փլաբիանոս զգրեալն[7], զի այնու հաւանեցին ժողովեալքն Քաղկեդոնեայ,[8] զոր էր խոռեալ երանելին Դիոսկորոս: Եւ խնդրեաց ի ժողովոյն դնել[9] սահման հաւատոյն[10] ըստ գրեցելոյն Լեոնի հայհոյութեանցն. Իսկ ուղղափառ իշխանքն, որ էին ի ժողովն՝ ասացին առ եպիսկոպոսունսն. այս է ժամանակ ճգնութեան ձերոյ ի վերայ ս. հաւատոյս, զի հաստատուն ունիցիք զաւանդութեան[11] հարցն խոստովանութեան. իսկ եպիսկոպոսունք[12] միաբանեցան ասել. Ո՛չ ումեք է իշխանութիւն ըստ հրամանի կանոնաց դնել սահման հաւատոյ, զի բաւական են մեզ եղեալ սահմանքն ի Նիկիայ և ի Բիւզանդիայ և յԵփեսոս. Յայնժամ հրամայեաց թագաւորն տալ ի պահեստի զեպիսկոպոսունսն հանդերձ իշխանաւքն[13] և գումարեաց ի վերայ նոցա զինազգեաց զաւրականս, զի թէ ոչ հնազանդեսցին կամաց թագաւորին՝ եղիցին պատուհասեալք. Եւ մեծաւ երկիւղիւ էին ի տարակուսանս, թէ զիարդ հնար լիցի ի պատժոցն զերծանել. Յայնժամ Յոբնաղ Երուսաղեմի եպիսկոպոսն հրամայեաց Անկղիպիադայ սարկաւագին Կոստանդինուպաւլսի[14] առնել սահման հաւատոյ և դնել նմա յԲ. բնութեանց զմին[15] խոստովանել. որում առ երկիւղի հաւանել[2] եպիսկոպոսացն, զի թերևս հնար լիցի այսու զերծանել. և ետուն զգրեալսն առ թագաւորն. Իսկ թագաւորն ոչ ընկալաւ, այլ եա տանել զգիրս հայհոյութեան գլխոյն Լեոնի. զոր ընթերցեալ մասն ինչ ի գլխոցն[3] միաբան ասացին եպիսկոպոսքն. Այսոցիկ ոչ հաւանիմք, զի Պաւղոսի Սամոստացւոյ[4] հայհոյութիւն է. այսպէս և ոչ Նեստոր յանդգնեցաւ ի հայհոյութիւն: Յայնժամ թագաւորն հանդերձ կնաւն իւրով եկն առ ժողովն և, որպէս ասի, եղև առ նոսա աւուրս երիս. իսկ ժողովեալքն ի Քաղկեդոն՝ ոմանք յերկեղէ և ոմանք ակնառութեամբ աղտեղի կնոջն[5] նորա, եղեն հաւանեալք նորաձայնութեան պիղծ հայհոյութեան թղթոյն Լեոնի. զոր նզովեցին յառաջագոյն՝ եղեն ընդ ինքեանց նզովիւքն, ընկալան զլուծեալն Թէոդորիտոս[6], զաշակերտն[7] Նեստորի, զորմէ ասի գլխակալ ժողովոյն, և զԻբաս Եդեսացի[8] զհամախոհն Նեստորի, զոր և գրեցին սահման հաւատոյ ըստ Լեոնի և Թէոդորիտոս[9] մոլութեան[10], որ հաւասար է Նեստորի պղծոյ և Թէոդորոսի և Դիոդորի և Պաւղոսին և Արտեմոնի կատարեալ հայհոյութեան[11]. յորում կա յետ սակաւ աւուրց[12] այսպէս. Խոստովանիմք ամենեքին[13] միաբան զՏէր մեր Յիսուս Քրիստոս ըստ Աստուածութեանն ի Հօրէ և ըստ մարդկութեանն ի կուսէ՝ միածին, յերկուց բնութեանց, ոչ ինչ բառնալով զտարբերութիւնսն իւրաքանչիւր բնութեանցն,[14] և մի դէմ և մի անձն միաւորելով: Եւ զի մի իւրեանց անբարշտութիւն յայտնի երևեսցի, զՆեստոր պատճառանաւք նզովեցին. Իսկ բազում[15] ի գլխաւորաց քաղաքին Կոստանդնուպաւլսի, որք Նեստորի հաւանեալք էին և կարծեցին թէ ճշմարտութեամբ նզովեցաւ Նեստոր[16]՝ զարմացեալք ասացին առաջի Թագաւորին, որպէս ի Նոցունց Քաղկեդոնացւոց պատմութիւնս

1. Ա. համախոհակից. Բ. համախոհից.
2. Բարկութիւնն Աստուծոյ ի վերայ նորա.
3. Բ. զճղ.
4. Հռոմայ.
5. զլուծեստանն (զմղ. ան) երորդաց.
6. զյառաջագոյն.
7. Ա. գրեալսն. Բ. զգրեալսն.
8. ի Քաղկեդոնիա.
9. դնել.
10. հաւատոյ.
11. զհաստատունն ունիցիք զաւանդութիւն.
12. եպիսկոպոսունքն.
13. Ա. իշխանօք հանդերձ. Բ. իշխանօքն հանդերձ.
14. Կոստանդնուպօլսի.

1. ի նմա Բ. բնութեանց զմինն:
2. առ երկիւղի հաւանեալ.
3. ի գլխոյն.
4. Ա. Սամոսատացւոյ. Բ. Սամոսատացոյ.
5. կնոջ.
6. Դիոդորիդոս.
7. զաշակերտն.
8. զԵդեսացի.
9. Ա. Թէոդորիտայ.
10. մոլորութեանն.
11. հայհոյութեանն.
12. յորում կայ յետ սակաւուց այսպէս.
13. ամենեքեան.
14. Օ. ոչինչ—բնութեանցն եւ.
15. բազում.
16. նզովեցին զՆեստոր.

ցուցանի՝ ասեն. Սուրբքն[1] զի՞ նզովին՝ զի թէ հաւատ զնեստորին սահմանեցին, զնա զի՞ նզովեցին. Իսկ թագաւորն բարկացեալ սաստեաց նոցայ[2] զի լռեցեն: Այսպէս ի նոցունց[3] յայտնեալ՝ կեղծաւորութիւն նոցա ծանուցաւ ամենեցուն, որ ևս առաւելագունաւք յայտնի է ուրացութիւն նոցա. զի որք ի Քաղկեդոն ժողովեալ էին եպիսկոպոսունք՝ նոյն յԵփեսոսի ժողովն էին[4], և գրով սահմանեալ ասացին. Որ ոք ասասցէ զՔրիստոս երկու բնութիւնս՝ նզովեալ լիցի, — և լուծաւ ի պատուոյն[5] Նեստոր և նմանիք նորայ. Իսկ ի Քաղկեդոն՝ կործանեալք ի յերկեղէ[6], և որ ձեռնարկաւ ուրացեալք զՔրիստոս ասացին. Որ ոչ ասէ զՔրիստոս երկու բնութիւն՝ նզովեալ լիցի. և ընկալաւ ի պատիւ զհաւանեալսն Նեստորի և զաշակերտեալս[7] իւր. Իսկ որք ոչ հաւանեցան կործանական հայհոյութեան ժողովոյն անաւրէն[8] սահմանադրութեանն՝ զնոսա[9] աքսորեցին՝ զՊետրոս Անտիոքացին, զՏիմոթէոս[10] և զԱնաստասիոս[11] զնորին եղբայր, և զԴիոսկորոս զԱղէքսանդրի եպիսկոպոսն նախ ի Կիզիկոն և ապա յԱրակլիա՝ բարի վկայութեամբ և խոստովանութեամբ ի Քրիստոս կատարեալ[12] սուրբն Դիոսկորոս. Եւ էր խռովութիւն ի սուրբ եկեղեցի Աստուծոյ զամենայն աւուրս Մարկիանոսի և Լևոնի[13] իբրև ամս ԻԴ. Եւ ըստ ասացելոյ պատճառիդ Ե. երորդ ժողով եղև ի Քաղկեդոն: Յաղագս որոյ և բարեպաշտ թագաւորն[14] յունաց Անաստաս և Զենոն յաւուրս[15] իւրեանց բարձին զաւանդ խոստովանութեան ժողովոյն Քաղկեդոնի նզովիւք: Նոյնպէս և հարքն մեր ոչ ընկալան և ոչ գնացին յայն ժողով. Եւ թէպէտ Յուստինիանոս ի թագաւորեալն իւրում կամեցաւ զաւանս տէրունականս, զոր եդեալ էր Յակոբայ առաքելոյ ընթերցուածաւք յԵրուսաղէմ՝ փոխեալ և զտեառնընդառաջն ըստ ծննդեանն առնել, և ոչ ըստ մկրտութեանն, զոր սովոր էին ի միասին առնել, որպէս և առնեն հայք՝ ոչ կարացաւ,[16] և ոչ ըստ աղանդոյն Քաղկեդոնի ժողովոյն հաստատել զտաւնըն, այլ բազում նշանաւք յանդիմանեալ լինի, որպէս ունի պատմութիւնն. Իսկ երկրորդն Յուստինիանոս իբրև թագաւորեաց, և նա ընկալաւ զժողովն Քաղկեդոնի. և[1] պատրէին զնա, թէ մեծ ճգնաւորն և Սինականն[2] Սիմէոն ընկալեալ է զժողովն Քաղկեդոնի, և ահա գիր խոստովանութեան նորա եդեալ է ի տապանի Եփրիմէ[3] ի Քաղկեդոնի: Եւ այլ ոմն նզովիւք հաստատէր թէ ոչ է. զի իբրև հաստատեաց Մարկիանոս զժողովն՝ առաքեաց զսահման ժողովոյն առ Սիմէոն, Ծանեա[4] հոգւով երանելին և ետ սպասաւորին հուր վառել, և հրամայեր[5] ձգել ի հուրն ասելով. Նզովեալ Մարկիանոս և ժողովն Քաղկեդոնի: Եւ զայս լուեալ Յուստինիանոս և կամեցեալ ճշգրտել՝ գնացեալ սակաւուք և ետ բանալ զտապանն[6] սրբոյն և հրամայեր սպասաւորին զնշխարսն հանել ի քղամիթն[7] իւր, զոր տարածեաց. և իբրև ստանեցաւ՝ հարցանէր, թէ այլ ինչ կա՞յ, և ինքն հայեցեալ ի տապանն՝ ոչ ինչ ետես. և սկսաւ յոգւոց ելանել և ծեծելով զերեսն ասել[8] ո՜հ, ապաշաւելով զհաւանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի յԱղեկսանդր[9] և յԵրուսաղէմ: Եւ կամեցեալ նորա բառնալ զաւանդ ժողովոյն Քաղկեդոնի՝ հասանէ նմա մահ գաւով. Նոյնպէս Պարսամու ոչ ընկալաւ զժողովն Քաղկեդոնի, և նա չարաչար նզովիւք նզովէր ևս, զի ամենայն ազգաց Քրիստոնէից չարի պատճառ ժողովն եղև Քաղկեդոնի. Եւ թէպէտ այլ ժողով բազում եղև յոյնս[10] և ի Հռոմ, ըստ զանազան պատճառի և ժամանակի, այլ այդոքիկ էին գլխաւորագոյն ժողովք.

Կարգեցից և զժողովսն որ եղեն ի հայս, թէ որպիսի պատճառաւ եղեն, զի և վասն այդոցիկ ամբաստանիմք ի յունաց և ի վրաց: Առաջի[11] ժողով արար սուրբն Գրիգոր ի Ի ամի կաթուղիկոսութեան իւրում, Լ. ամի թագաւորութեանն Տրդատայ, ի թագաւորական քաղաքն, յորժամ եկն Ռոստակէս[12] ի Նիկիա[13] ժողովոյն, ընդ ինքեան ունելով զգիրս կանոնաց, զլուխ ԱԺ. Երկրորդ ժողով արար տէրն[14] Ներսէս յորժամ եկն ի Կոստան-

1. Ա. Օ. սուրբքն. Բ. սուրբն.
2. նոցա.
3. ի նոցունց իսկ.
4. յԵփեսոս ժողովեցին.
5. ի պատուոյ.
6. յերկիւղէ.
7. զաշակերտեալսն.
8. և անօրէն.
9. զնոսա.
10. և զՏիմոթէոս.
11. ա. զԱնաստասիոս. բ. զԱնաստասիոս.
12. բարի խոստովանութեամբ և վկայութեամբ կատարեալ ի Քրիստոս.
13. Լևոնի.
14. թագաւորքն.
15. յաւուր.
16. ոչ կարաց առնել.

1. քանզի.
2. Սինականն.
3. Եփիմէի.
4. եւ ծանեաւ.
5. հրամայէր.
6. զտապանն.
7. քղամիդն.
8. աւաղէր.
9. Աղեքսանդր.
10. ի Յոյնս.
11. առաջին.
12. Արիստակէս.
13. ի Նիկիայի.
14. տէր.

գնուպաւլսէ. Երրորդ ժողով արար սուրբն Սահակ հանդերձ Մեսրոպաւ[1] յԱշտիշատ, յորժամ եկն եհաս թուղթն ի Կիւրղէ և ի Պրոկղէ[2] և որք յԵփեսոս Մ.[3] ժողովեալ էին՝ յորժամ զփառս ի բարձունս[4] կարգեցին, յաւելեալ ի բանս հոփուացն, որպէս ի Նիկիա զհաւատամքն. կարգեցին ըստ նմին և Բիւզանդիայ: Նաև զխաչեցարն յաւելին[5] ընդդէմ Նեստորի: Չորրորդ ժողով արար Յովսէփ աշակերտ Մաշտոցի և որրոյն Սահակայ ի ԻԶ. ամի Յազկերտի վասն կարգաւորութեան եկեղեցւոյ, ուր ժողովեցան եպիսկոպոսունք քառասուն, կանոնեցին սահմանել բանս Ի. Հինգերորդ ժողով արար Բարգէն[2] ի քաղաքի դաշտի, ի ԺԲ. ամի Կաւատայ[7] արքայի, յաղագս չար հերձուածոյն Ակակայ և Բարդուծանայ, որք զՆեստորին ունէին. վասն որոյ գիր արարեալ, սահմանս կարգելով՝ ասեն. Մեք՝ հայք և հոռոմք և վիրք մի խոստովանութեամբ հաստատեալ եմք, զոր աւանդեցին Գ. ժողովն. Ի սկզբան[8] թվականութեան[9] հայոց արարեալ ժողով վեցերորդ տէրն Ներսէս ի Դուինի,[10] Դ.[11] ամի կաթուղիկոսութեան իւրում, և ի ԺԴ. ամի Յուստիանոսի[12] Կայսեր, և նախ զԾննդեանն և զմկրտութեանն միաւորութիւն[13] հաստատեցին, և վասն երկուց բնութեանց զմիաւորութիւնն ունելով՝ սրբեցին դարձեալ զխաչեցարն, երկս սրբասացութեամբ ընդդէմ բաժանմանց նոցայ.[14] Իսկ առ[15] թագաւորութեամբ իւր Հերակլէս արար ժողով ի Կարնո[16] քաղաք իմաստասիրաւքն յունաց և կոչեաց զբազումս ի հայրապետացն Հայոց, և հաւանեալք երկարնակ խոստովանութեան նոցայ[17] և զԵզր կաթուղիկոս[18] հաստատեցին և զսուրբ ժողովն Դունա[19] ի բաց մերժեցին, և զմիաւորութիւն ծննդեան[1] և զմկրտութեանն և զխաչեցարն յերից սրբասացութեանցն ի բաց հանին և հաւանեցան Եզրի կաթողիկոսին. և ոչ ընդունէին զաւանդեալն սուրբ[2] ժողովոյն Դունա[3] և Ներսիսի[4] և Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զոր ընկալեալ էին հայրապետքն որ յառաջ քան զնոսա էին յաջորդեալ զաթոռ սրբին[5] Գրիգորի. առաջին՝ Տէր Ներսէս ամս Թ., առ որով և ժողով[6] եղև. Տէր Յովհաննէս[7] ամս ԵԺ. Տէր Մովսէս ամս Լ. Տէր Աբրահամ ամս ԻԳ, առ որով վիրք ի բաց կացին ի միաբանէ[8] հայոց. Տէր Կոմիտաս ամս Ը. Քրիստափոր ամս Բ,[9] Այսոքիկ էին կաթողիկոսք խոստովանութեամբ ժողովոյն Դունա[10] կացեալք մինչև ցԵզր[11] կաթուղիկոսք[12]. Եւ զկնի նորա կացին կաթիղիկոսք Զ. մինչև ցԵղիա, որ էր աւանդութեամբ նոցայ, զոր ոչ ընդունի ս. եկեղեցի. Արդ զկնի Եղիայի[13] շընորհեցաւ ի հոգոյն[14] սրբոյ Տէր Յովհաննէս, զոր արար ժողով ի Մանազկերտ գեղ ի գաւառագլուխն[15] Հարքնայ[16] և զժողովքն[17] Քաղկեդոնի բաց[18] ընկեցին և հաստատեցին զուղղափառ հաւատսն որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր.—Գլխաւորք[19] ժողովք ի հայք այսոքիկ են, զի զաղանդն մերժեցին զչար և ոչ ընկալան: Եւ ոչ միայն ոչ ընկալան հայք, այլ և բազում ազգ և գաւառք զժողովն Քաղկեդոնի ոչ ընկալան, որպէս և այժմ կարգեմք զանուանսն. Նախ Հոռոմ[20] թագաւորանիստ տեղին, որ նզովեն զժողովն Քաղկեդոնի և զՄարկիանոս[21], որ սատակեցաւ ի հրշտակէ Աս-

1. Մեսրոպայ.
2. ի Պրոկղէ.
3. Մ. (Բծ.) ին
4. ի բարձունս.
5. կարգեցին.
6. Ա. Օ. յուսանցիւմ ուրիշ գրով՝ սուրբն Բարգէն.
7. Կաւատայ արքայի.
8. ի սկզբան.
9. Բ. թուականութիւնն բ. թվականութեանն.
10. Տեառն Ներսեսի ի Դուինն.
11. ի Դ.
12. Բ. Յուստիանոս.
13. զմիաւորութիւնն.
14. բաժանմանց նոցա.
15. Օ. առ.
16. ի Կարնոյ.
17. նորա.
18. ի կաթուղիկոս.
19. Դվնա.

1. ծննդեանն.
2. ի սուրբ.
3. Դվնա.
4. Ներսեսի.
5. սրբոյն.
6. ժողովն (օ եւ).
7. Յովհաննէս.
8. ի միաբանութենէ,
9. Ա. Տէր Քրիստափոր ամս դ. Տէր Կոմիտաս ամս բ. (բայց «Քրիս» վանկի վերեւը դրած է մի փոքր բ). Բ. Տէր Քրիստափոր.
10. սուրբ ժողովոյն Դվնա.
11. յեզր.
12. Ա. կաթողիկոս.
13. Եղիայի.
14. ի հոգւոյն.
15. Ա. գեղի ի գաւառագլուխն.
16. Հարքնա.
17. զժողովն.
18. ի բաց.
19. գլխաւոր.
20. Հոռմ.
21. Մարկիանոս,

ատածոյ, և ոչ զՇուր և զխմոր ի սուրբ խորհուրդն խառնեն, և բոլոր ամենայն Իտալիա և Դաղմատիայ [1] և Սարգոնիկէ մեծ կղզի և Սիկիլիա և Սպանիա ի մուտս արևու. և մեծն Րոմիա և Գերմանիա և Ասորիկէ և Եղլադա, և այլք քաղաքք ի մօից կամ Մակեդոնիայ. [2] Իսկ ի կողմանս հարաւու[3] յայսկոյս յունական ծովուն Եգիպտոս[4], յորում են գաւառք ԽԱ. և Աղեքսանդրիա[5], ընկալեալ յերեք ժողովոյն սրբոյ զուղեղ [6] դաւանութիւն հաւատոյ՝ ընդ մեզ ի նոյն կանոնի կան հաստատուն, չընկալեալք զժողովն Քաղկեդոնի. և Ափրիկէ, որ ունի գաւառս ԽԱ, յորում է[7] մայրաքաղաքն Կարքեդոն, [8] և Մաւրիտանիայ [9] մինչև ի մուտս արևու՝ հանդերձ քաղաքաւ գաւառաւքն, որ ունի զմայրաքաղաքն Տիգանիայ [10], և սոքա ի նոյն հաստատել[11] հաւատս՝ ոչ միաբանեն ընդ յոյնս և ընդ վիրս. և վերինն [12] Թեբայիթ [13] զնոյն ունին հաւատ. Եթեովպիա [14] մեծ և փոքր մինչև ի ծովն Հնդկաց, և Արաբիայ [15] ի մէջ երկճեղ կարմիր ծովուն, և ապառաժն Արաբիայ՝[16] այս ամենայն ընդ մեզ զերից սուրբ ժողովոյն ունին զաւանդութիւն, որոշեալք ի յունաց և ի վրաց։ Եւ այլ վասն վրաց բաժանելոյն զինչ ասացից. զի ի Քրիստոսէ մինչ ի չար ժողովն Քաղկեդոնի ՑՀԴ. ամբք են [17], և ընկալաւ ամենայն եկեղեցի յառաքելոցն զմի դաւանութիւն հաւատոյ անբաժանելի. և յետ ՅԽ. ամի ընկալան հայաստանեայք զքարոզութիւն[18] ի սրբոյն Գրիգորէ, և վրաց ազգն ընդ մեզ նզովեցին զժողովն Քաղկեդոնի զամս հարիւր, մինչև ի ժողովն Հայոց ի Դուին [19] և ի Մանազկերտ, ուր որոշեցին զեդել[20] հաւատն ի Ք...,[21] և հաստատեցին զերիցս [22] սուրբ ժողովոյն, և Գաբրիէլ Մցխիթայի[23] եպիսկոպոսն ընդ մեզ, որ էր Խախացի,[24] և յետոյ բաժանեցան ի մէնջ։ Մնաց Գաբրիէլ և եկաց ի տեղի նորա Կիւրիոն, որ ունէր ի ծածուկ զաղանդն Քաղկեդոնի, և նախանձեալ ընդ պատուո [1] աթոռոյն Սիւնեաց և Աղուանից քան զիւրն՝ որոշեցաւ ի մէնջ յաւուրս Աբրահամու Հայոց կաթողիկոսի, և այլ և այլ կոչեցաւ և ոչ հնազանդեցաւ. Ապա առաքէ զՊետրոս [2] զգրան եպիսկոպոսն [3] իւր, զի թէ ոչ հնազանդեսցի՝ լուծցէ զնա. իսկ նա կամաւք զգեստն [4] մերկացեալ տա ցնա. ապա ի գաղտի [5] զկնի առաքել, զի մախէր [6] սպանանել [7] զնա քարամ [8], և ինքն երթա [9] ի հաղորդութիւն առ աղանդն Քաղկեդոնի՝ չար մտաց հաղորդեալ ի կամս չարին, և քարկոծի Պետրոս ի լեառն Կանկուրար[10], հանդերձ երկու կրաւորաւք[11]։ Եւ զայս կարճառանելով ասացաք և առաւեալ [12] վասն յունաց [13] և վրաց, որ ամբաստանեն զմէնջ [14] թէ հայաստանայք [15] միայն ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի. Ահա ցուցաք, զի բազում ազգ ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի [16]. Զի աւելորդ [17] էր զկնի Գ.-ից սուրբ ժողովոյն և այն ժողով. զի զիւրաքանչիւր [18] ազգ ցուցանէ ստատանա[19] պատրողն ճշմարիտ լինել և ամենեքեան խորհին [20] զայլս [21] յինքեանս դարձուցանել, այլ ոչ զընտրութիւն ճշմարտութեան կամին և զմիաբանութիւն հաճութեամբ. Եւ այս ախտ ամբարտաւանութեան է, զի յոյն [22] զինքն կարծէ ճշմարիտ և հռոմն զինքն, նմանապէս և ազգ ամենայն, առ որս ասելի է. Արդ եղիցի Աստուած ճշմարիտ և ամենայն մարդ սուտ*, Թէ այնպիսի ունէաք կամք, որ զբարին յամենայն ազգաց ժողովէաք և զխոտանն ի բաց

---

1. Դաղմատիա.
2. Մակեդոնիա.
3. Հարաւոյ.
4. յեգիպտոսի.
5. Աղեքսանդրիա.
6. զուղիղ.
7. յորմէ.
8. Կարքեդոն.
9. Մորիտանիա.
10. Տիգանիա.
11. Հաստատել.
12. Ա. վերին.
13. Թեբայիս՝
14. Թէոպիա.
15. Արաբիա.
16. ապառնած Արաբիա.
17. ամէ.
18. զքարոզութիւնն.
19. ի Դվին.
20. զեղեալ.
21. ի Բաղկեդոն, Բ. ի Բաղկեդոնի.
22. զերից.
23. Միրացի.
24. Խախւացի.

---

1. պատւոյ.
2. Ա. օ. փակագծի մէջ՝ Գրս.
3. եպիսկոպոս.
4. զգեստն.
5. Ա. գաղտն Բ. գաղտնի (օ. ի.)
6. մախայր.
7. սպանանէ.
8. քարամբք.
9. Ա. երթայ
10. Կանկուար,
11. կրօնաւորօք.
12. առաւել.
13. յունաց.
14. զմէնջ.
15. Հայաստանեայք.
16. Բաղկեդոնի.
17. յաւելորդ.
18. Բ. եւ զի.
19. Ա. եւ իւրաքանչիւր.
20. խորհէին.
21. Ա. օ.
22. յոյնն.

ընկուաք[1]. Աստուած գործակից լինէր և ուղղէր կարգ եկեղեցոյ[2]. զի չէք ազգ որ բարի կարգ ոչ ունի և խառան. Առաջինն[3] զայս անէաք, որ վկայութեամբ գրոց և կանոնաց հաստատեաք զխոստովանութիւնն յամենասուրբ[4] Երրորդութիւնն[5] Քրիստոսի, և ապա զկարգս տունից և զսովորական աւանդութիւնս. զի ամենայն ազգ խմորով վարի[6] և ջրով, որք ընկալան զժողովն Քաղկեդոնի՝ ի հաց պատարագին և ի բաժակին. բայց հայք և հոռոմանեցիք[7] և այլ ազգ, որք ոչ ընկալան զժողովն Քաղկեդոնի՝ բաղարջիւ[8]. յոյնք և վիրք աղիւ վարին և սորիք ձայթ[9] եւ յաւելուն. Նմանապէս այլ[10] կարգս և ի տունս և ի պահս բաժանին. ասորիք հրէարար մինչև ցերեկոյ պահեն և լուծանեն զչորեքշաբաթ և զուրբաթ. վիրք զրամանգակ զամի[11] զչորեքշաբաթ և զուրբաթ լուծանեն. և զոր Տէր հրաման ետ՝ զկնի[12] յարութեանն ուտել, զայն պահեն, Յոյնք զկրճատել և զմալել զայն[13] քահանա[14] ձեռնադրեն, և զմեղուցեալն քահանա[15] նոքա և այլք չհանեն[16] ի պատարագէն, այլ հայք ոչ ընդունին և ոչ ի սակաւ սխալանս զգիտելին, Հոռոմանեցիք[17] բազմաւրեա նշխարեա պատարագեան, որ ոչ ընդունին կանոնք: Յոյնք պատարագ և կիսապատարագ անուանեն. հոռոմանեցիք[18] անկին քահանաիւք վարեն և անխտիր շնութեամբ. վիրք յամենայն տեղիս անզգուշաբար պատարագ մատուցանեն, ի պահս բազում զանազանին, զձուկն և զձայթ[19] և զգինի պահոց քարոզեն, և հայք ոչ եւ. Զխաչ և զեկեղեցի յոյնք ոչ աւրհնեն և աւրհնեալ խաչ (ի ս.) եկեղեցոյ հայո[20] երկիր ոչ պագանեն, ի ձեթ մեռոնին այլ և այլ յաւելուածս[1] խնկոց խառնեն, որ ոչ է ի կանոնաց. և զեղն աւրհնութեան[2] զպարզաբար զաւրհնեալն հայոյ[3] ոչ ընդունին: Եւ[4] յոյնք և վիրք կենդանին[5] պատարագ մատուցանեն, և հայք ոչ. Հոռոմանեցիք[6] յանուն միոյ մեռելոյ բնաւ պատարագ ոչ առնեն. իսկ յոյնք և վիրք և հայք բազմաց և միոյ, Հոռոմանեցիք բազում կանայս առնեն որքան մեռանեն իսկ այլ ազգ ոչ եւ. Հոռոմանեցիք և այլ ազգ զկերակուրս ոչ խտրեն[7] զգործել. իսկ հայք ոչ ճաշակեն, Հայոց կրաւնաւորք բամբասին ոչ առնել ծնունդ և ուտել միս և ոչ աւետեաց տաւնել, և ոչ սարկաւագաւք[8] և դպրաւք, և հանդերձիւ և բացաւ գլխով առնել պատարագ՝ անզգուշաբար հագորդին ամենայն ազգ, և աշխարհականաւք, փոխանակ քահանայից*: ՀԲ. լեզուէ ԿԸ. ազգ քրիստոնեա[9] է, Դ. ազգ միայն չէ քրիստոնեայ՝ տաճիկն և պարսիկն, հրայն[10] և սկիւթացին, որ ասեն թուրք, Եւ ամենայն ազգ զանազան կրաւնս ունի, որ ոչ է գիտելի վասն հեռաւորութեան[11] որպէս հնդիկն և հաբաշին[12], նորին և զանգին, և խտտին[13], և այլ բնակիչք հարաւոյ. Այսպէս ազգ[14] հիւսիս-կանք՝ ռուզն և ալան[15], և քաղակն խունձք, որ են սրոյքք, և այլք բազումք, խոստովանողք ի Քրիստոս. որք յարեւելս[16] որպէս մոգք, և ճենք, և այլք, և յարեւմուտս՝ բուլխարք և փռանկ[17]՝ ԼԶ. լեզուք[18], ալամանն, և այլք.

(Կը շարունակուի)

1. ընկնումք.
2. եկեղեցւոյ.
3. առաջին.
4. Ա. ամենասուրբ Բ. յամենասուրբ.
5. Երրորդութեան.
6. վարին.
7. Ա. Հռօմայեցիք Բ. Հռոմայեցիք.
8. բաղարջիւ.
9. ձէթ.
10. յայլ.
11. զամն.
12. յետ.
13. զմալեալն.
14. քահանայս
15. Ա. քահանայի. Բ. քահանայ.
16. ոչ հանեն:
17. Հռոմայեցիք (Ա. Հռօմայեցիք):
18. Հռ(օ)մայեցիք.
19. զձէթ.
20. Բ. հայոց Բ. խաչի եւ եկեղեցւոյ ոչ երկրպագանեն հայոց.

1. Ա. յաւելուած.
2. զնոյն օծութեան.
3. զհայոց.
4. Օ. Եւ.
5. կենդանոյն.
6. Հռ(օ)մայեցիք (նոյնպէս եւ յաջորդները).
7. խնդրեն.
8. սարկաւագօք.

* Թէպէտ բոլոր երեք օրինակներու մէջ եւս այսպէս է, բայց պէտք է ենթադրել, որ «ամենայն ազգ» յաջորդ նախադասութեան սկիզբն էր. գուցէ լուսանցքի վերայ գրուած լինելու համար պատահմամբ տեղափոխուած է, որից եւ յառաջ է գալիս խօսքի անկապութիւնը:

9. քրիստոնեայ.
10. հրեայն.
11. հեռաւորութեան.
12. Ա. հապաշնորին Բ. հապաշն.
13. խայտին:
14. Ա. եւ ազգ. Բ. եւ ազգք հիւսիսականք.
15. ռուզն, ալանն եւ օսն.
16. յարեւելս.
17. Ա. Մրանկ, Բ. Մռանգք.
18. Օ. Ա.